ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/304

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.11.2021թ. թիվ 26/26-1/18037-2021 գրությամբ «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.10.2021թ. թիվ ՊՆ/02/5765-2021 գրության հիման վրա, 04.11.2021թ. թիվ 26/26-1/18037-2021 գրությամբ նախաձեռնել է «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/304 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:25-ին և 22.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.10.2021թ. թիվ ՊՆ/02/5765-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպության միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նապարարությունը 26.10.2021թ. դրությամբ, միակողմանի մասնակի լուծել է՝ «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև 19.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 26.10.2021թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարկվել է www.procurment.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/304 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:25-ին և 22.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/304 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/304 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև 19.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-14/1-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով 47 անվանում գրադարանի գրքերի ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. օգոստոս:

3. ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետի ՊԿ գնդապետ Տ.Քոչարյանը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանին ուղղված 04.10.2021թ. թիվ 788 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 19.05.2021թ. N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում կից աղյուսակով ներկայացված վեց անվանում (թվով տաս միավոր՝ ընդհանուր գումարով 123999 (մեկ հարյուր քսաներեք հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ) գրադարանի գրքեր չեն մատակարարվել:

Համաձայն վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության առաջարկում եմ միակողմանի լուծել պայմանագիրը, քանի որ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի»:

4. ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետի ՊԺԿ Ա.Ասատրյանի կողմից կազմվել է զեկուցագիր ուղղված ՀՀ ՊՆ ՆՏԱԳ վարչության պետի տեղակալ Ռ. Օհանյանին հետևյալ բովանդակությամբ.

«Զեկուցում եմ, որ ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանը 04.10.2021թ. է/փ ելք 788 գրությամբ առաջարկել է ՀՀ ՊՆ և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պայմանագիրը թվով 7 անվանում ապրանքատեսակների մասով միակողմանի մասնակի լուծել՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հայտնում եմ նաև, որ համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հավաստման, հիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանքների ընդունման գործընթացը 04.10.2021թ. դրությամբ կասեցվել է և մատակարարումների իրականացման դեպքում դրանք չեն մուտքագրվի պահեստ:

Վերը նշվածից ելնելով խնդրում եմ Ձեր միջնորդությունը պատվիրատուի ղեկավարին՝ ՀՀ ՊՆ և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված ապրանքատեսակների անվանացանկի»:

5. Կից ներկայացվել է ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված N 1-ի գնման ժամանակացույցով հաստատված, սակայն չմատակարարված ապրանքների հետևյալ անվանացանկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Կոդը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին /դրամ/	Ընդհանուր գին /դրամ/	Մատակարարման ժամկետը
5	Գրադարանի գրքեր /Վոեննո վոզդուշնիե սիլի/	22111120/5/10/2	հատ	3	12000	36000	2021թ. օգոստոս
8	Գրադարանի գրքեր /Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար/	22111120/8/10/2	հատ	3	17333	51999	2021թ. օգոստոս
19	Գրադարանի գրքեր /Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի/	22111120/24/10/2	հատ	1	9000	9000	2021թ. օգոստոս
33	Գրադարանի գրքեր /վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսիոնալով/	22111120/38/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս
40	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվադեյստվիյա իխ պրիմինենիյու	22111120/45/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս
41	Գրադարանի գրքեր /ռազվեդկա ի կոնտռռազվեդկա/	22111120/46/10/2	հատ	1	6000	6000	2021թ. օգոստոս
43	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվոդեյստվիյա իպ պրիմենենիյու	22111120/48/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս

6. Պատվիրատուն «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին ուղղված 26.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև 19.05.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մատակարարման ժամկետը	Չմատակարարված քանակ
5	Գրադարանի գրքեր /Վոեննո վոզդուշնիե սիլի/	հատ	3	2021թ. օգոստոս	3

8	Գրադարանի գրքեր /Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար/	հատ	3	2021թ. օգոստոս	3
19	Գրադարանի գրքեր /Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի/	հատ	1	2021թ. օգոստոս	1
33	Գրադարանի գրքեր /վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսիոնալով/	հատ	1	2021թ. օգոստոս	1
40	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվադեյստվիյա իխ պրիմինենիյու	հատ	1	2021թ. օգոստոս	1
41	Գրադարանի գրքեր /ռազվեդկա ի կոնտռռազվեդկա/	հատ	1	2021թ. օգոստոս	1
43	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվոդեյստվիյա իպ պրիմենենիյու	հատ	1	2021թ. օգոստոս	1

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.10.2021թ.-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը: (...)»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.11.2021թ. թիվ 26/26-1/18037-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.10.2021թ. թիվ ՊՆ/02/5765-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև 19.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-14/1-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի Գնման ժամանակացույցով 47 անվանում գրադարանի գրքերի ձեռքբերման համար մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. օգոստոս:

ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետի ՊԿ գնդապետ Տ. Քոչարյանը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանին ուղղված 04.10.2021թ. թիվ 788 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 19.05.2021թ. N ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում կից աղյուսակով ներկայացված վեց անվանում (թվով տաս միավոր՝ ընդհանուր գումարով 123999 (մեկ հարյուր քսաներեք հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամ) գրադարանի գրքեր չեն մատակարարվել:

Համաձայն վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության առաջարկում եմ միակողմանի լուծել պայմանագիրը, քանի որ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի»:

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետի ՊԺԿ Ա.Ասատրյանի կողմից կազմվել է զեկուցագիր ուղղված ՀՀ ՊՆ ՆՏԱԳ վարչության պետի տեղակալ Ռ.Օհանյանին հետևյալ բովանդակությամբ.

«Զեկուցում եմ, որ ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանը 04.10.2021թ. է/փ ելք 788 գրությամբ առաջարկել է ՀՀ ՊՆ և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊ ընկերության միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պայմանագիրը թվով 7 անվանում ապրանքատեսակների մասով միակողմանի մասնակի լուծել՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հայտնում եմ նաև, որ համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված հավաստման, հիշյալ պայմանագրի շրջանակներում ապրանքների ընդունման գործընթացը 04.10.2021թ. դրությամբ կասեցվել է և մատակարարումների իրականացման դեպքում դրանք չեն մուտքագրվի պահեստ:

Վերը նշվածից ելնելով խնդրում եմ Ձեր միջնորդությունը պատվիրատուի ղեկավարին՝ ՀՀ ՊՆ և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ՝ համաձայն կից ներկայացված ապրանքատեսակների անվանացանկի»:

Կից ներկայացվել է ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի Հավելված N 1-ի գնման ժամանակացույցով հաստատված, սակայն չմատակարարված ապրանքների հետևյալ անվանացանկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Կոդը	Չ/Մ	Քանակ	Միավորի գին /դրամ/	Ընդհանուր գին /դրամ/	Մատակարարման ժամկետը
5	Գրադարանի գրքեր /Վոեննո վոզդուշնիե սիլի/	22111120/5/10/2	հատ	3	12000	36000	2021թ. օգոստոս

8	Գրադարանի գրքեր /Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար/	22111120/8/10/2	հատ	3	17333	51999	2021թ. օգոստոս
19	Գրադարանի գրքեր /Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի/	22111120/24/10/2	հատ	1	9000	9000	2021թ. օգոստոս
33	Գրադարանի գրքեր /վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսիոնալով/	22111120/38/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս
40	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվադեյստվիյա իխ պրիմինենիյու	22111120/45/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս
41	Գրադարանի գրքեր /ռազվեդկա ի կոնտռռազվեդկա/	22111120/46/10/2	հատ	1	6000	6000	2021թ. օգոստոս
43	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվոդեյստվիյա իպ պրիմենենիյու	22111120/48/10/2	հատ	1	7000	7000	2021թ. օգոստոս

Պատվիրատուն «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին ուղղված 26.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ի միջև 19.05.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-14/1-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մատակարարման ժամկետը	Չմատակարարված քանակ
5	Գրադարանի գրքեր /Վոեննո վոզդուշնիե սիլի/	հատ	3	2021թ. օգոստոս	3
8	Գրադարանի գրքեր /Վոեննիյ էնցիկլոպեդիչեսկիյ սլովար/	հատ	3	2021թ. օգոստոս	3
19	Գրադարանի գրքեր /Իստորիա վոեննոյ ստրատեգիի Ռոսսիի/	հատ	1	2021թ. օգոստոս	1
33	Գրադարանի գրքեր /վոեննայա գեոգրաֆիա դլյա պրոֆեսիոնալով ի նեպրոֆեսիոնալով/	հատ	1	2021թ. օգոստոս	1
40	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, Բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվադեյստվիյա իխ պրիմինենիյու	հատ	1	2021թ. օգոստոս	1
41	Գրադարանի գրքեր /ռազվեդկա ի կոնտռռազվեդկա/	հատ	1	2021թ. օգոստոս	1
43	Գրադարանի գրքեր /Օռուժիե սովրեմեննիխ վոյն, բոեպրիպասի, սիստեմի ուպրավլյաեմոգո վոոռուժենիյա ի մեռի պռոտիվոդեյստվիյա իպ պրիմենենիյու	հատ	1	2021թ. օգոստոս	1

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.10.2021թ.-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>30</u>*** օրից ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 19.05.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.11.2021թ. թիվ 26/26-1/18037-2021 գրությամբ «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ս.Ա.Ն. Բրայթ» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**